

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

06 նոյեմբեր 2025 թվականի թիվ 131-Ն

ք. Երևան

ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով և ապահովելով հանրության իրազեկված լինելու իրավունքի իրականացումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը որոշում է.

- Սահմանել կարևոր իրադարձությունների շրջանակը՝ համաձայն Հավելված N 1-ի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

2025 թ. նոյեմբերի 06
ք. Երևան

ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Սույն որոշմամբ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) սահմանում է հանրության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող կարևոր իրադարձությունների շրջանակը՝ նպատակ ունենալով կանոնակարգել տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների՝ այդ իրադարձություններն ամբողջությամբ կամ մասնակի, ուղիղ եթերում կամ վերահաղորդմամբ հեռարձակելու իրավունքը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:
2. Հանձնաժողովը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ բացառելու իր կարգավորման ոլորտում գործող տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից այնպիսի կարևոր իրադարձությունների հեռարձակումը, որոնք առանձնակի կարևորություն են ներկայացնում Հայաստանի Հանրապետության հասարակության համար և այնպիսի եղանակով, որը կարող է զրկել հանրության լայն շրջանակներին այդ միջոցառումները Հայաստանի Հանրապետության տարածքում ուղիղ հեռարձակմամբ կամ տեսաձայնագրությամբ անվճար դիտելու հնարավորությունից:
3. Հանրության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող միջոցառումները, սույն որոշման նպատակներից ելնելով, պետք է համապատասխանեն հետևյալ չափորոշիչներին՝
 - ա) հանդիսանան այնպիսի նշանակալի միջոցառումներ, որոնք հետաքրքրություն են առաջացնում հասարակության լայն շրջանակներում, ներառյալ այն անձանց համար, որոնք սովորաբար չեն դիտում կամ չեն մասնակցում նմանատիպ միջոցառումներին.
 - բ) ունենան նախապես սահմանված կազմակերպման ժամկետներ և իրականացվեն միջոցառման կազմակերպողի նախաձեռնությամբ.
 - գ) միջոցառմանը վերաբերող տեսալսողական ծրագրերի կամ հաղորդումների գույքային իրավունքները պետք է հասանելի լինեն տեսալսողական մեդիաձառայություն մատուցողներին, որոնց սփռման տարածքն է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:
4. «Կարևոր իրադարձություն» է համարվում պետական կամ համազգային նշանակության քաղաքական, մշակութային, կրոնական, մարզական կամ դրանց իրենց նշանակությամբ համարժեք իրադարձություն, այդ թվում՝
 - 1) Իրադարձությունն առաջացնում է համընդհանուր հետաքրքրություն տարբեր սոցիալական խմբերի շրջաններում.
 - 2) Իրադարձությունն ունի բարձր դիտելիություն կամ դրա նկատմամբ առկա է հանրային հասարակական հետաքրքրություն.

- 3) Իրադարձությունն ունի նշանակություն հասարակության արժեքներին, մշակութային ժառանգության պահպանմանը, պատմական զարգացման կամ ժողովրդավարության ամրապնդման համար.
- 4) Իրադարձությունն առանձնանում է հատուկ մշակութային նշանակությամբ և նպաստում է ազգային մշակութային ինքնության պահպանմանն ու ամրապնդմանը:

Պաշտոնական հրապարակման օրը՝ 12 նոյեմբերի 2025 թվական: